# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

**Տարերային և տեխնածին աղետների կանխարգելում, արձագանքում և պատրաստվածություն Արևելյան գործընկերության երկրներում, փուլ 3 (PPRD East 3)**



**Իրականացման ժամանակահատված:** 01.10.2020 - 30.09.2024

**ԱլԳ երկրներ:**

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

**ԵՄ ներդրում:** € 5 999 971

**Ընդհանուր բյուջե:** € 5 999 971

**Իրականացնող կազմակերպություն(ներ):**

Swedish Civil Contingencies Agency (MSB), Emergency Services Academy Finland, Ministry of Interior of the Slovak Republic – Section of Crisis Management, Centro

**Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:**

facebook.com/pprdeast3,

**Նախագծի կայքէջ:** pprdeast3.eu

**Նախագծի նկարագրություն:**

«Տարերային և տեխնածին աղետների կանխարգելում, արձագանքում և պատրաստվածություն Արևելյան գործընկերության երկրներում» ծրագիրը, որը նախաձեռնվել է 2010 թվականին ԵՄ Արևելյան գործընկերության քաղաքականության նախաձեռնության շրջանակներում, նպատակ ունի ամրապնդել Արևելյան գործընկերության երկրներում աղետների ռիսկերի նվազեցումը և ճգնաժամերի կառավարումը և խթանել ԵՄ քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի հետ տարածաշրջանային համագործակցությունը: Այժմ ընթացքի մեջ է ծրագրի 3-րդ փուլը և կիրականացվի 2020–2024 թթ. ժամանակահատվածում: Ծրագրի թիրախային խմբում ներառված են քաղաքացիական պաշտպանության մարմիններն ու հիմնական գերատեսչությունները, պետական հատվածի այլ համապատասխան շահագրգիռ կողմերը, գիտական հանրությունը, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը:

Ծրագիրը նախատեսված է յուրաքանչյուր գործընկեր երկրի վրա առավելագույն ազդեցություն ունենալու համար՝ արձագանքելով ազգային կարիքներին և կարողություններին, և խթանում է գործընկեր երկրների շրջանում ու ԵՄ անդամ երկրների հետ փոխադարձ ուսուցումը, փորձի և լավագույն պրակտիկաների փոխանակումը: Ծրագիրը հետամուտ է լինում, որպեսզի դրա իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն դարձվի գենդերային, շրջակա միջավայրի և մարդու իրավունքների խնդիրներին՝ դրա ազդեցությունը, կայունությունը և արդիականությունը բարձրացնելու նպատակով:

**Ակնկալվող արդյունքներ:**

- Քաղաքացիական պաշտպանության դերակատարներն ավելի լավ են պատրաստված, իսկ տեղական ուսուցման կարողությունները ամրապնդված և փոխկապակցված են Միության քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի դասընթացների հետ.
- Քաղաքացիական պաշտպանության մարմինները լավ հագեցած են արձագանքման կարողությունների եվրոպական լավագույն պրակտիկաների ու միջազգային չափանիշների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներով.
- Արևելյան հարևանության գործընկեր երկրներում ամրապնդվել է արտակարգ իրավիճակների պատրաստվածության ներուժը՝ հատուկ ուշադրություն դարձնելով անդրսահմանային մակարդակում արձագանքման պլանավորման ամրապնդմանը.
- Ամրապնդվել է ազգային թղթակիցների և վաղ նախազգուշացման տեղեկատվության փոխանակման շուրջօրյա կոնտակտային կենտրոնների ցանցը.
- Բարձրացել է համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների միջև միջգերատեսչական համակարգման արդյունավետությունը.
- Քաղաքացիական պաշտպանության մասնագետների, կամավորների և հասարակության լայն շերտերի շրջանում բարձրացել է բնական և տեխնածին աղետների մասին իրազեկվածության մակարդակը.
- Արևելյան հարևանության գործընկեր երկրներում ավելացել է քաղաքացիական հասարակության և գիտական